

Ա Է Ե Տ Ա Բ Է Բ



“ԹՈՂ ՏՈՒԷՔ ՄԱՆԲ ՏՂՈՑԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ԴՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԺՉ.


ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՓԵՏՐՈՒԱՐ 1, 1887

ԹԻԻ 2

ՄԵՆԻՆ ՊԵՏՐՈՍԻ

ԱՐՁԱՆԸ

Սբ. Բեթրապուրկ քաղաքին մէջ կայ հրապարակ մը Նէվա գետոյն եզերքը, և այս հրապարակին մէջ կը կանգնի Մեծին Պետրոսի արձանը որ կը ցուցուի պատկերին մէջ: Արձանին պատուանդանն է ասպիտ միակտուր կրանիթ որ կը կըռէ առաւել քան 1,000,000 քաշ: Բերուեցաւ յիշեալ հրապարակը թրամուէյ մը շինուելով մինչև քարահանքը որմէ կտրուեցաւ կրանիթը, յետոյ ներքևը դրուեցաւ թնդանօթի ուռմբեր և գլորուելով հասաւ իւր այժմու տեղը: Այս պատուանդանին վրայ



ՄԵՆԻՆ ՊԵՏՐՈՍԻ ԱՐՁԱՆԸ

կը կանգնի կայսեր հսկայական հեծեալ արձանը: Արձանը շինուած է սլէն-ձէ, և զայն քանդակող անգրիտացործը ուզած է ցուցնել կայսեր անյաղթելի արիւթիւնը յառաջվարելապալով անոր իւր ձին նոյն իսկ գահաւանդի մը վրայ: Չին կը կոխտէ նախանձու օձը իւր ոտից ներքև: Այս յիշատակը կառուցուեցաւ հրամանաւ կատարինէ Բ. կայսրուհւոյն ի պատիւ իւր մեծ նախնոյն:

Եւ վայելուչ է որ Մեծին Պետրոսի այսպէս պատիւ տրուի այն քաղաքին մէջ որ կը կոչուի անոր անուամբ: Մեծն Պետրոս երբ հիմնեց զՍբ. Բեթրապուրկ, սա էր ի սկզբան փոքրիկ գիւղ միայն՝ ձկնորսաց քանի մը խրճիթներ

ով, և ըրաւ զայն մայրաքաղաք իւր կայսրութեան: Հիւնդըրա նաև Ռուսիոյ նաւատորմին, և ինք առաջինն եղաւ որ Ռուսիոյ տուաւ նշանաւոր դերք մը Եւրոպայի մեծ ազգաց կարգը: Անոր իշխանութիւնը որ վերջացաւ 1725 ին, արատաւորեցաւ իւր ժամանակին մէջ հասարակ եղած քանի մը անգթութեամբ և ոճիրներով, բայց նա արժանապէս կը համարուի մեծագոյնը Ռուսիոյ բարձր իշխանաց:

ԲԻՐՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԻՎ ԳՈՐԾԵՐ ԿԱՏԱՐԵՆ

“Մայր,” ըսաւ հինգ տարեկան փոքրիկ տղայ մը, “կը փափաքէի որ Յիսուս հիմա երկրիս վրայ ըլլար:” “Ինչո՞ւ համար, սիրելիս:” “Վասն զի շատ կ’ուզէի որ բան մը ընէի անոր համար:” “Բայց քեզի նման փոքրիկ տղայ մը ի՞նչ կրնայ ընել փրկչին համար:”

Տղան պատասխան չկրցաւ տալ քանի մը փայրկեան, յետոյ վեր նայեցաւ իւր մօրն երեսը, և ըսաւ,

“Գնչ՞ու, մայր, ես կրնայի փոքրիկ ծառայութիւններ ընել անոր:”

“Կրնաս ընել զայդ, տղաս, և պէտք է որ ընես: Հոս կայ գաւաթ մը առույնեղէն և քանի մը նարինջ որոնք պիտի զրկէի ծառային հետ աղքատիկ ծերունի հիւանդ Մարգարիտին, բայց կը թողում որ դո՛ւն տանիս զանոնք, և այսպէս ծառայութիւն մը ը-

ՈՍԿՐՆԵՐՈՎ ՊԱՐՏԵՋ

նես փրկչին համար, վասն զի երբ երկրիս վրայ կը գտնուէր, ըսաւ, «Ուրովհետեւ այս փոքրագոյններէն միոյն ըրիք, ինձ ըրիք:»

Ուրեմն, յիշեցէք, տղայք, երբ որ դուք մարդասիրական գործ մը կ'ընէք որեւիցէ մէկուն ի սէր Յիսուսի, նոյնն է իբր թէ փրկչին հիմա ապրէր երկրիս վրայ և դուք ընէիք զայն անոր անձին համար:

ՀՆԳԻԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ ՄԸ

Կը յիշենք թէ ժամանակաւ զըստնուեցանք երեք տղայոց հետ որ իրենց փոքրիկ կենաց բոլոր օրերը անցուցած էին թուրքիոյ ներսերը, և այն ատենն առաջին անգամ ըլլալով երկաթուղւոյ կառախումբ մը տեսան: Ի՞նչ զարմանալի բան թուեցաւ անոնց այն ահագին երկաթեայ ձին որ բերնէն շոգի դուրս կու տար: Ի՞նչպէս հանդարտ և արագ կը սահէր կ'անցնէր կառախումբը, և ո՞րչափ աւելի զուարճալի էր այն՝ քան որչափ ձիերու վրայ բեռնցուած սնտուկները կամ առանց զսպանակի կառքերը, որովք անոնք անկէ առաջ ճամբորդած էին:

Գիտենք թէ մեր փոքրիկ ընթերցողաց մէջ կան հարիւրաւորներ որ տակաւին չեն տեսած երկաթուղի, և չեն գիտեր ալ թէ երբ պիտի տեսնեն: Կը յուսանք թէ անոնք ողջ պիտի մնան և տեսնեն ի թուրքիա երկաթուղեաց շինուելը: Լաւագոյն բանը զոր կրնանք ընել անոնց համար այսօր, է հրաւիրել զանոնք երևակայութեամբ հեծնել Հնդկաստանի երկաթուղւոյ մը կառաց մէջ:

Այս երկաթուղին կ'ելլէ Գանգէս գետոյն վրայ եղող Ալլահապատ քաղաքէն և կ'երթայ Պոմպէյ մեծ քաղաքը որ է Արաբիոյ ծովուն վրայ: Երկու քաղաքաց հեռաւորութիւնն է 850 մղոն, կամ այնչափ հեռի որչափ կոստանդնուպոլէ Ուրմիոյ լիճն ի Պարսկաստան, և եթէ երկաթուղեաւ ճամբորդենք գիշեր և ցերեկ՝ այս բոլոր հեռաւորութիւնը կրնանք կրել 36 ժամէն:

Պիտի ուզէինք սակայն կենալ ճապարհորդի քով և ուղեւորել Նապատոս գետոյն եղերքը Մարմարիոն ժայռերը: Գետոյն երկու կողմը կան շարուած սեպաձև մաքուր սպիտակ մարմարիոն

ժայռեր սրոց վրայ տեղ տեղ կանաչ և սև երակներ կը տեսնուին, և կը բարձրանան մինչև 400 սոքք, և անոնց վերերը պիտի լսէինք կապիկներուն ձայները: Ճամբուն վրայ կան ուրիշ գեղեցիկ տեղեր ևս: Համբաւաւոր քարայրներ, անտառներ որոց մէջ վագրեր կը պտտին, նաև բարբեր դաշտեր, հին տաճարներ և դամբարաններ, ամէնքը կը հրաւիրեն զմեզ կանգ առնուլ և նայել: Բայց մենք արագ յառաջ կ'երթանք և կ'անցնինք մեր ճամբորդութեան վերջին և ամենէն հեռաքրքրաշարժ մասէն: Եթէ նայիք Հնդկաստանի աշխարհացոյցին վրայ, կը տեսնէք լեռանց շղթայ մը

Մէկ, երկու, երեք, չորս կոտրած ոսկորներ համբեցի թուամած ծաղկանց և տերևներուն մէջ Բեննիկի պարտիզին մէջ:


«Ինչո՞ւ հոս տնկուած են անոնք,» հարցուցի:

Բայց Բեննիկ տխուր կ'երևէր և իւր փոքրիկ կոշիկն քիթը մխելով կապերտին մէջ, ըսաւ շատ ցած ձայնով մը, «Ես դրի դանոնք հոս, Հօրաքոյր:

«Ինչո՞ւ համար, սիրելիս,»

«Վասն զի,» ըսաւ Բեննիկ. . . բայց այդ մեծ գաղտնիք է իմ և մայրիկին մէջտեղ:»

«Կը յուսամ թէ աղէկ գաղտնիք է, սիրելիս:»



ՀՆԳԻԱՍՏԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻ ՄԸ

որ կը կոչուի Արևմտեան Կոթք ճիշդ Պոմպէյի ետեւը:


Այս լեռանց վրայէն անցնող երկաթուղւոյն մասն է զոր կը տեսնենք պատկերին մէջ: Կը դառնայ դահաւանդ լեռանց շուրջը նման պտուտակի, և հետզհետէ կ'ելլէ վեր մինչև որ կը հասնի լեռան գագաթը և անկէ կը սկսի ոլորուն ճամբով վար իջնել միւս կողմը: Եթէ մեր կառքին մէկ կողմէն դուրս նայէինք, կը տեսնէինք բարձր ժայռեր կախուած մեր վրայ, և միւս կողմը կը տեսնէինք ստիպիլի դահապէժ մը:

Եթէ իրօք տանէինք զձեզ այդ երկաթուղւոյն վրայէն, ո՞չ ապաքէն ամէնքդ ալ ուրբա պիտի ըլլայիք: Լաւ, եթէ գտնուէք տուտուածեուն անձ մը որ պատրաստ է ապլ այդ ճամբորդութեան ծախքը, մենք ալ կը տանինք ձեզ:

«Շատ աղէկ բան մը չէ,» պատասխանեց Բեննիկ, «ես անկէ շատ աւելի աղէկ գաղտնիքներ ունեցած եմ:»

Երբ զայս ըսաւ, անոր ձայնը տխուր էր, ինչպէս նաև անոր սիրուն երեսնիքը: Նա ջանք չըրի իմանալ գաղտնիքը: Նաև ասկէ աւելի բան չըլեցի կոտրած ոսկորներուն վրայ մինչև այս ամառ երբ մէկտեղ կը գտնուէինք ծովեզերքը:

Օր մը Բեննիկ շինեց պարտեզ մը պատերը խեցիներէ և քարերէ: Իւր պարտեզին մէջ անկեց քանի մը վայրի ծաղիկներ որոնք ժողվեր էր առաւօտուն: Երբ ծաղիկները կատարեալ պէս բացուեցան, հոն տարաւ իւր մայրը, և ըսաւ յոյժ զուարթ ժպիտով մը, «Անոնք շատ մը աւելի գեղեցիկ չե՞ն քան այն կոտրած ոսկորները:»



Մօրն աշուրները լեցան արտասուօք մինչ կը համբուրէր իւր զաւակին սիրուն երեւար : Եւ դողբողուն ձայնով ըսաւ , «Շատ մը աւելի սիրուն են , սիրելիս :»

Յաջորդ օրը ինձի ըսին գաղտնիքը : Բեննիկ երբեմն սուտ կը խօսէր : Եւ ամէն անգամ որ չխօսէր ճշմարիտ , մայրը կտարած ոսկր մը անկել կու տար անոր պարտէզին մէջի ամենէն ընտիր ծաղկին քով :

Բոլոր ամառը աչքին առջևն էին անոնք , և երբ ձմեռն եկաւ , կար միայն մէկ , երկու , երեք , չորս փոքրիկ ճերմակ բլրակներ զորս կըրնար տեսնել պատուհանէն : Չորս սուտերու յիշատակները :

Արդ , դուք կրնաք հասկընալ թէ ինչու համար այսչափ երջանիկ էր Բեննիկ իւր պարտիզին ծաղիկներուն պատճառաւ , և թէ ինչու համար ուրախութեան արտասուօք լեցուեցան մօրն աշուրները :


ԼԵՆՏԱ ԷՆՏ

Մեր պատկերին մէջ ցուցուած ժայռն է Անդրդիոյ հարաւային արևմտեան ծայրը , և անոր այս անուան նշանակութիւնն է «Շրայր երկրին» : Է կըրանիթ սեպագեալ ժայռ 60 ոտք բարձրութեամբ , որմէ մարդ կրնայ տեսնել լայն Ռիկիանոսն Ատլանտեան : Անկէ իբր մէկ մըրն անդին կան քանի մը վտանգաւոր ժայռեր ուրոց վրայ շինուած է լուսատուն մը , և մտաւ ծովեզեր վրայ՝ կը գտնուի անհազին հատուած մը ժայռի գնդաւերպ , այնպէս ճշդիւ հաւասարակչիտ դրուած որ կրնայ օրուիլ ետ և առաջ :

Թերևս ոմանք ըսեն թէ այս չէ հետաքրքրական պատկեր , բայց ըստ մեզ՝ է հետաքրքրական : Նստել այսպիսի տեղ մը և ըսել կոհակայ անընդհատ գոռիւնը , կամ նայել և մտածել թէ՛ եթէ մարդ երթոյ դէպ այն կողմը ուր ժայռը կը նայի , պարտի ճանապարհորդել հազարաւոր մըրններ նորէն ցամաք հասնելու համար : Այս խորհուրդը խորոզոյն զգացմանց մէջ կ'ընկղմէ մարդոյս հոգին : Երևելի մաս տեսնալի մը մտացի փոքրիկ սղի մը հարցնել կու տայ իւր պատմութեանց

միոյն մէջ , « Ի՞նչ կ'ըսեն , քոյր իմ , այն ամենի կոհակները :» Եւ ինձ կը թուի թէ շատ մը փոքր տղայք և աղջկունք ևս նոյնը պիտի զգային և հարցնէին նոյն բանը : Կոհակը կարծես թէ կը պատմեն մեզ այն բազմութիւն նաւաւարաց վրայ որ նաւաբեկութեան հանդիպելով թաղուեցան այն կոհակաց ներքև , կամ մարգարիաներուն վրայ զորս կը ծածկեն իրենց մէջ :

Ձրին ընդարձակ տարածութիւնը աչաց տեսութեան սահմաններէն անդին , խորհել կու տայ մեզ յաւիտե-



ԼԵՆՏԱ ԷՆՏ

նականութեան վրայ : Եւ կոհակաց մշտնջենաւոր գոռիւնը մինչև անգամ երբ չկայ հով , վասն զի թերևս հազար մըրն հեռին փոթորիկ մը ելած է , խորհել կու տայ մեզ թէ մեր խորհուրդներն և գործերն ալ աղբեցութիւն կ'ընեն հեռաւորաց և հեռաւոր ժամանակ ապրողներու :

Կանգնելով այսպիսի տեղ մը , կը խորհնք թէ ի՞նչպէս մեծ էր կարողութիւնն այն իակին որ ժամանակաւ հրամայեց հովերուն և կոհակներուն հանդարտել , և անոնք հնազանդեցան անոր :

ՏԱՐՈՒԿԱԿ ՀԻՌԸՆԿԱԼՈՒԹԻՒՆ ՄԸ Անդրդիացի մը որ շատ տարիներ բնակեցաւ Հնդկաստան , կ'ընէ ծի-

ծաղաչարժ պատմութիւն մը թէ ինչպէս անոր կինը շնորհաւորեցին նոր տուն մը ունենալուն աւթիւ երեք հարիւր կապիկներ :

Ամուսնացայ , կ'ըսէ , Հնդկաստան , և տուն մը վարձեցի բնակութեան համար ուրիշ սպիտակամորթ մարդոց բնակարաններէն իբր տասնեչորս մըրն հեռի : Այն առաւօտ որ հասանք հոն , կինս գնաց փոխել իւր ճամբու հանդերձները մինչ սպասաւորք կը պատրաստէին նախաճաշը տան առջև գըտնուող հովանաւոր բարձրաւանդակին վրայ որ կը նայէր դետը :

Պնակներուն ձայնէն ահա իջան գտունն հովանաւորոց ծառներէն և ելան վեր անոր ետև ձորին մէջ բուսած ծառերուն վրայ՝ նոյն իսկ տան երգիքէն և ամէն կողմէ բազմութիւն կապիկներու : Եկան ելան վեր մինակ և զոյգ զոյգ , և ընտանեօք , և բռնեցին իրենց անդրը առանց հանելու ձայն կամ շունչ , և նստան հոն իբրև բազմականք սպասելով իբր թէ խրճոյքն սկսելուն : Եւ երբ ամէն բան պատրաստուեցաւ և նախաճաշը գրուեցաւ , բոլոր կապիկները նստան , և ետ գացի կանչել կնոջս :

«Նախաճաշը պատրաստ է , և անոնք ամէնքը կը սպասեն ,» ըսի :

«Ո՞վ են այն սպասողները ,» հարցուց կինս վախնալով : «Կը կարծէի

թէ մինակ պիտի ըլլայինք , և ես հիմա դուրս կ'ելլէի իմ ամէն օրուան շըրջազէստովս :»

«Հոգ չէ ,» ըսի : «Հոս գտնուողները իրենք շատ հոգ տարած չեն հագուել նորաձեւութեան համեմատ : Անոնք գրեթէ միևնոյն հանդերձները կը հագնին բոլոր տարին :»

Եւ այսպէս կինս ելաւ տնէն դուրս : Երևակայեցէք թէ ինչ եղաւ անոր զարմանքը :

Բարձրաւանդակին մէջտեղ կը կենար նախաճաշի սեղանը , և մնացած բոլոր տեղերը նաև թէ՛ վանդակապատներուն և թէ՛ սանդղի աստիճաններուն վրայ բռնած էին անհամար բազմութիւն կապիկաց , ծանր և լուրջ որչափ կարելի է , և այնպէս

անչարժ և լռիկ՝ որպէս թէ չէին ողջ այլ փորձերը յարդուլ լեցուած : Միայն անոնց աչուքները կը նայէին, և փոքրիկ բորբոսն ականջները կը շարժէին : Կինս բարձրաձայն ինդարով, որոյ վրայ կապիկները ամէնքն աւելի լուրջ կերպարան մը առին, նստաւ :

« Բան մը կ'ուզե՞ն ուտել, » հարցուց կինս :

« Փորձէ անգամ մը, » ըսի : Եւ ուստի առաւ պարսիմամ մը և նետեց կապիկներուն մէջ :

Երեք հարիւր կապիկներ մէկանց վեր ցատկեցին օդին մէջ և ճիշդ մէկ ակնթարթ ելաւ խռովութիւն մը զոր անկարելի է նկարագրել : Յաջորդակէն թարթի մակէն կապիկ նստած էր իւր տեղը ծանր և լուրջ իբր թէ բնաւ չարժամ չըլլային իրենց տեղերէն : Միայն թէ իրենց աչուքները կը թարթէին և ականջները կը շարժէին :

Կինս նետեց անոնց ուրիշ պարսիմամ մը ևս . դարձեալ խռովութիւն, աղմուկ, և այնուհետև ուրիշ մը և ուրիշ մը : Բայց ի վերջոյ սուսած ըլլալով ամէն ինչ որ տարու էինք, եւ լանք երթալ : Կապիկներն ելան անմիջապէս, իւրաքանչիւրը բարձրաւանդակին վրայ, և յառաջ քալելով դէպ ի սանդղի աստիճանները, իջան վար վե՛սմ թափորով ծեր և դեռուհաս միտաին, և ցրուեցան իրենց այն աւուր գործերուն դբաղելու :

ԳԻՒՅԱԶՆ ՄԸ

Շատ անգամ կը կարդանք տղայոց կատարած դիւցազնական գործի մը վրայ, բայց հետագայ պատմութեան քիչ անգամ հաւասարը կը գտնուի ի մասին անվեհեր քաջութեան, արագ ըմբռնման, և իսպառ մտաւոյութեան անձին՝ ընկերով մը օգնելու ջերմ փափաքէն շարժուած :

Երկու պատանիք, զորս պիտի կոչենք Օննիկ և Չարլի, նման ուրիշ բոլոր տղայոց շատ կը սիրէին պարտի մտաւոյները, որտղութեամբ, ճիշդ նորութեամբ, և վայելելով բոլոր հաճոյքները զորս բնութիւնը կը մատուցանէ պատանեաց և երիտասարդաց ճոխապէս :

Տղաքը դուրս ելած էին այս նպատակներով, և կը պարտէին դեղեցիկ անտառային հոսանքի մը մերձակայններ, և ահա Օննիկ յանկարծ կոխեց թունաւոր ահագին օձի մը պոչին վրայ : Օձը դարձաւ և վրէժխնդրութեամբ խորունկ մխեց իւր ժանիքը աղին սրունից մահն մէջ : Օննիկ ահաբեկեալ նուաղեցաւ և ինկաւ գետին :

Տղաքը պարտէ մը վեր ելելու վրայ կը գտնուէին : Չարլի կորսնցուց իւր ընկերը, և դառնալով փնտռել

զնա՝ տեսաւ օձը : Սակայն օձը այս ատեն կորսնցուցած էր իւր թոյնը և արագ կը սողար կ'երթար : Վայրկենի մը մէջ Չարլի ցատկած գացած էր իւր բարեկամին քով : Առանց յայտադերու երկվայրկեան մը իսկ, հանեց Օննիկին գուրպաները սրունքէն, և առնելով իւր թաշկինակը, այնչիւ կապեց անով անոր սրունքը ճիշդ օձին խածուածքին կարմրած կէտերէն վեր : Այնուհետև բերանը դրաւ վէրքին վրայ և բոլոր ուժովը ծծեց արիւնն և թոյնը իւր բերնին մէջ :

Շուտով ոտքն սկսաւ ուռիլ, և Չարլի ուրախ եղաւ տեսնելով որ իրենց մօտ կու գար երկրագործի մը տղայ : Զոր բերելու զրկեց զնա, և երկուքն օգնութեամբ Օննիկին խելքը գլուխն եկաւ : Յետոյ կարգադրութիւններ ըրին տուն տանել զնա : Որչափ կարելի էր շուտով բժիշկ կանչեցին, և Չարլի անոր ձեռքն յանձնեց զնա :

Բժիշկը կ'ըսէ թէ Օննիկ իւր կեանքը պարտական է իւր բարեկամին շոյա և իմաստուն գործողութեան : Մէկ վայրկեան չանցաւ օձին խածնելուն և Չարլի իւր թաշկինակով Օննիկին սրունքը կապելուն մէջտեղ : Այս բանը դադարեցուց արեան հոսումը մինչ Չարլի աշխուժիւ կը ծծէր թոյնը վէրքէն : Տղաք, ո՛չ ապաքէն այս էր բարեկամութիւն, քաջութիւն և իմաստութիւն : Չենէ ո՛վ այսպէս շուտով պիտի խորհէր թէ ի՞նչ ընելու էր : Չենէ ո՛վ բուն իսկ իւր բերնին մէջ պիտի քաշէր ծծելով օձին մահաուիթ թոյնը իւր բարեկամին վիրաւորեալ սրունքէն :

Կեղցէ՛ Չարլի : Կ'ուզէի որ կարող ըլլայինք գիտնալ թէ Չարլի ի՞նչ պիտի ըլլայ և ընէ երբ ըլլայ չափահաս մարդ : Հազիւ կրնայ ընել աւելի ազնիւ գործ մը քան զայս զոր ըրաւ իւր մանկութեան երջանիկ օրերը . բայց հաւաստի ենք թէ անոր կեանքը պիտի ըլլայ օգտակար, բարձր և դիւցազնական ինչ և գործէ :

«ՉԱՍՑ ԹԻ ՈՐ»

Առաւօտ մը զարնուեցաւ մօրաքոյր Սարայի գեղեցիկ խոհանոցին դուռը, և ահա սանդղին աստիճաններուն վրայ կը կենար փոքրիկ աղջիկ մը ձեռքը սակառուլ :

« Չէ՞ք գներ բան մը, » ըսաւ, երբ ներս կը մտնէր դռնէն : « Ունիմ անէ հիւսուած քանի մը աղւոր գուրպաներ : »

« Անշուշտ դուն չհիւսեցիր այս գուրպաները, այնպէս չէ՞, աղջիկս, » ըսաւ մօրաքոյր Սարա :

« Այ, Տիկին, այլ մեծ մայրս հիւսեց դանտը : Մեծ մայրս չկրնար քայլել, քան որոյ հանդարտ կը նստի և կը հիւսէ գուրպայ, և ես կը պատիմ հոս և հոս, և կը ծախեմ գանտը . այս կերպով կը ճարենք մեր պէտքը : Նա կ'ըսէ

թէ մենք ընկեր ենք, և ես գրեցի ցուցակ մը և դրի մեր վառարանին վրայ, « Մեծ մայր և Մաքրիկ : »

Մօրաքոյր Սարա ծիծաղեցաւ, և գնեց գուրպաները, և մինչ կը համարէր ստակը անոնց գինը վճարելու համար, Մաքրիկ ըսաւ, « Ասով պիտի գնենք հաց և պանիր երեկոյեան ճաշի համար : »

« Ի՞նչ պիտի ընէիք եթէ բան մը ծախած չըլլայիր, » հարցուց մօրաքոյր Սարա : Բայց Մաքրիկ շարժեց իւր գլուխը և ըսաւ,

« Տես, մենք աղօթք ըրինք « Մեր հանապազօրգ հացը տուր մեզ այսօր, » և Աստուած խոստացած է լսել երբ կ'աղօթեն մարդիկ, քան որոյ կարծեմ չկայ « թէ՛որ » այդ մասին : Երբ Աստուած կ'ըսէ բան մը, այն է անշուշտ և ստոյգ : »

ՀԱՆՆԵԼՈՒԿ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԷՆ

- ՍՈՂՈՄՈՆԻ ՄԷԿ ԱՌԱԿԸ
- Ես կը բարկանամ 36 տառերէ .
- Իմ 21. 34. 20. 2. 18. 30. 33. Էր Ասիոյ եօթը եկեղեցեաց մին .
 - Իմ 5. 17. 28. 16. Էր Յակոբայ որդւոց մին .
 - Իմ 12. 4. 34. 25. 15. 21. 26. 1. Էր Դաւթի եղբայր մին .
 - Իմ 11. 7. 27. 11. 2. 6. Էր Աստուգորի թագաւորութեան մայրաքաղաքը .
 - Իմ 28. 17. 3. 7. 9. Էր Թուրքի որդւոց մին .
 - Իմ 23. 34. 32. 7. 20. 36. Էր Ներսիսի շինած մէկ քաղաքը .
 - Իմ 24. 14. 4. Էր Բնիկամին որդւոց մին .
 - Իմ 13. 15. 3. 33. 26. 6. 22. 22. Է թուրքի մէջ նեղուց մը .
 - Իմ 1. 19. 8. 26. Էր Իսաբաբի որդւոց մին .
 - Իմ 40. 31. Ը. Ը տառերն են .

Կ. Պոլիս ԱՐՄԱՅՈՒ Բ. ՎԱՐԴՈՒԿԱՆՅԱՆ

ՊԱՏԱՍԻԱՆ ՀԱՆՆԵԼՈՒԿԻ

Անցեալ Յունուար ամսոյ հանդիպելիս պատասխանէ Առաք. ԹԳ. 20 համարը, « Կամատուններուն հետ քաղաք իմաստուն կ'ըլլայ, բայց անմիտներուն հետ ընկերացողը չար կ'ըլլայ : » Զոր լուծեցին

Պարտիզակ. — Յովհաննէս Ս. Ալեքսանեան
 Խապիւղ. — Աղնիւ Գարութիւնեան
 Ատարազար. — Վահան Յ. Ղօճամանուկեան
 Կ. Պոլիս. — Յովսէփ Կ. Պարութեան
 Պարտիզակ. — Թայթա Մ. Ալլիեան
 Էտեմիշ. — Աբաւիթ Գ. Բեմալեան

Գեկտեմբերի հանդիպելիս ուղիղ պատասխաններ ընդունեցինք նաև հետևեալ անձերէն, որ են Մալաթիա. — Ռուբէն Յ. Արեւելեան
 Կիւրի. Արմենակ Խաղուպեան. Հայկազուն Խանթիմուրեան. Պետրոս Կակոսեան. Արմենակ Պա. հատուրեան :

Ամերիկայի Միտիմարտի Կոնգրէսի փոքրէն, Խմբագրութիւն

Փոխ-խմբագրութիւն ԿՈՍՏԱՆԳՍՏՆ

Յինճանճըլուր եօթմուսէ կ'ըլլայ իմ խան :

ԿՈՍՏԱՆԳՍՏՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՏԱՎՈՒՐ ՎՍԵՆՅԱՆ